

Ա. Գորեննոցին պատուհաններուն լաթ կարելու է ու, գոնէ մայիսէն ինչուան օգոստոս անանկ ձգելու է :

Բ. Գորենը հնձուածին պէս ծեծելու է որ ցեցերը ատեն չունենան մէջը հաւկիթ ձգելու :

Գ. Երբոր ցեցերը թիթեղնիկ դառնան, պէտք է ցորենը խառնել՝ որ չքրուին թիթեղնիկները . հապա ցանց մը շինելու է՝ դերձանով հիւսած ու կրոր շրջանակի մը վրայ քաշած, ցանցին երեսն ալ ոստղի՝ խէժ կամ ինչ և իցէ կաշուն նիւթ մը քսելու է . իրիկուան դէմ երբոր թիթեղնիկները թռչտիլ կը սկսին՝ աս ցանցը ցորենին երեսը քալցուր, անոնք կուգան վրան կը կաշին. պատերուն վրայ մնացածներն ալ դիւրին է ջարդել առաւօտանց կանուխ :

Ուրիշ տեսակ մը ցեց ալ կայ աս երկու տեսակէն ալ փնասակար, որ սովորաբար դիզուած ցորենին երեսի հատիկները իրարու հետ կը միացնէ, այնպէս որ ցորենը տախտակ տախտակ կ'ըլլայ ու կը խմորի՝ աս անտանելի ցեցերը ջնջելու համար վերի հնարքներէն զատ ասոնք ալ աղէկ են .

Ա. Դիզուած ցորենին երեսի պրնտացած կտորները և անմիջապէս անոնց տակի հատիկները պէտք է վերցնել ու շուտ մը տաք ջրի մէջ ձգել . ետքը աս ցորենները հաւերուն և ուրիշ կենդանեաց կրնան տրուիլ :

Բ. Ընդ որ զործողութենէն ետքը, կամ թէ առանց ասոր ալ, ցորենի դէզը լաւ մը խառնելու տակն ու վրայ ընելու է . ասով ցեցերը կը փախչին ու պատերուն վրայ կը քաշուին . ան ատեն ցորենի դէզին չորս դին կարգ մը աղէկ կաշուն ձիւթ դնելու է . ցեցերը ցորենին վրայ երթալու ատեն ան ձիւթին դպչելուն պէս կը սասկին :

Գ. Կրնայ ըլլալ որ ան ցեցերէն ոմանք պատերուն ու գերաններու ձեղքերուն

մէջ ալ մտած ըլլան . ասոնք ցախ աւելով աղէկ մը շփելու աւելելու է :

Գորենի ցեցերուն վրայ առ այժմ, ինչպէս որ ըսինք, այսչափ միայն գրելով ալ յուսանք որ չափաւորապէս գոհ ըրինք հետաքնին և հարցասէր անձին փափաքը . բայց ուրիշ անգամ միտք ունինք գրել նոյն ցեցերուն նաև մասնաւոր բնաւորութեանցը վրայ, և միանգամայն կը ջանանք լուծել նա և ան տարակոյսը թէ արդեօք ան ցեցերուն կամ ցեցոտած ցորենին մարդուս մարմնոյն վրայ եւք ձգելուն պատճառը ինչ կրնայ ըլլալ :



Տ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ընդ որ զործողութենէն մէկը ասկէ հարիւր տարիի չափ առաջ հետեւեալ հանելու կը նստած ըսուած ոտանաւորի վրայ շինէր է, ու երկու հազար ոսկի խոստացեր է ասիկայ լուծողին . ապահովութեան համար ալ թէ ստակը և թէ լուծումը գրած ու կնքած յանձներ է Լոնտոնայի Տէնտայութ անունով դրամատանը . այնպէս որ հանելուկը լուծողը նոյն դրամատունը պիտի գրէ, ու թէ որ շիտակ ելլէ տուած մեկնութիւնը, ստակը իրեն պիտի տրուի : Ըզիտցուիր թէ ինչուան հիմա ասոր մեկնութիւնը տուող մը եղեր է թէ չէ : Մենք հոս ան նուագին ճիշդ թարգմանութիւնը դրենք պարզ գրաբառ՝ գէթ ընթերցողաց զուարճութեանը համար :

- ԵՍ ինձ եմ Որդի, հայր, հաւ և եղբայր,
- Եւ կոյս, և Դայեակ, Ամուսին և Մայր .
- Անարգ եմ, և զիս որոնէ աշխարհ .
- Վիշապ եմ անգութ, Արծիւ, Ծառայ չար :
- Եօթն եմք, և յորժամ լինիմ անձնասպան,
- Չախտս այլոց սըրբել ևս եմ բաւական .
- Չիմ ըզկեանս բարձոյ չիք ՚ի մէջ մարդկան,
- Չի ճոխ իմ աւարք միշտ ինձ կենանքս տան :
- Հող էի և ջուր, և կեամ ես այլովք .
- Մահկանացու եմ որպէս ամէն ոք .
- Բայց ոչ եմ պատեալ մըտով ոսկերոք :
- Եթէ դու ցանկաս մեծամեծ շահուց,
- Թող զիս ըսպանցէ ոմն ՚ի մեռելոց,
- Եւ եղէց ճարակ ազգակցաց իմոց :

1 Էօթէ :  
2 Լտ. Yponomeuta tritici ըստ Լաթրէյլի : Իտ. Falsa tignuola del grano. Գ. Չ. Fausse-teigne.